

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Գ

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆՆԻ ԸՆԴՀԱՅՄ ԹՈՔԱԽՏԻ

ԱՂՂԻԱՅ բժշկութեան Ակադեմիային մէջ կարեոր խնդիր կը յուզի թռքային ախտից վրայ: Այս հիւանդութիւնն ամէն տարի բազմաթիւ զոհեր ունի. մեծ քաղաքաց տարեկան մասնացուցակին երրորդ մասն կը գրաւեն թղթախտացեալք: օրինակի համար 1884 տարւոյն՝ ՚ի ֆարբիզ 56, 970 վախճանելոց 15,000 թղթախտացեալ էին: Թոքախտոր փոխադրական և ճարակող ախտ մ՚է: ամէն առողջաբանից ջանքն է քննել փոխադրութեան պայմանները, իր փոխադրելու այլ և այլ կերպերը և հուսկ ուրեմն ասոնց գէմ պատերազմելու միջոցները: Արդ թղթախտն ևս պէտք է դասել զգուշանալի և խորչելի հիւանդութեանց կարգը, և խոհեմութեամբ՝ ՚ի գործ գրուած առողջաբանական միջոցներով բաղրովին ջնջել զայն: ահա այս էր նաև անցեալ տարի՝ ՚ի մի հաւաքեալ բազմաթիւ գիտնականաց վեհանձն զաղափարն և ջանքը: իրենց ժողովքը յուրական առաջ առանձին Մասնախումբ մը կազմեցին՝ որ հակէ և քաջալերէ միշտ այս հիւանդութեանց վրայ գրուած աշխատութիւններն և փորձերը. վերջերս այս Մասնախումբն առանձին հարտարակութիւն մ՚ըրաւ այս հիւանդութեան վրայ և բժշկութեան Ակադեմիային բարձր հաւասութեան ներկայացուց: Ահաւասիկ համառօտիւ տեղեկութիւններն:

Նախ և առաջ թղթախտն է մակարուծական (parasitaire) հիւանդութիւն մը. թղթերնիս կ'ախտանայ՝ վասն զի գործարանական ամենափոքր կազմած մը մեր հիւասուածոց մէջ կը թափանցէ: Այս միքրոպլ մեր շնչած օդին, կերակուրին և երբեմն նաև մեր մորթին վրայ գտնուած փոքր և աննշան կարծուած վէրբերէն կամ սպիներէն ներս կը մտնէ:

Թոքախտացելոց թուքին մէջ կան փոքր մասնիկք, և նախ և առաջ պէտք է այս բանիս ուշադիր ըլլալ պէտքէ արգիթել որ օդոյ մէջ չտարածուին, ուր չորնալով և խառնուելով մմնոլորտի փոշեաց հետ կրնան շնչուիլ, և այսպէս առաջ կու գան միշտ նորանոր թղթախտա-

ցեալք . պէտք է տալ թոքախտացելցյն թքաման մը որոյ մէջ գտնուի միբրոպայինջ հեղուկ մը . այս ամանները պէտք է թափել հրոյ վերայ և յետոյ մաքրել եռացած ջրով , բացարձակապէս պէտք է զգուշանալ և չթափել այս ամանները ախոռոց , կարեաց տեղւոյ կամ հանոցաց մէջ . գարձեալ խորհուրդ կու տան նոյն մատենագիրք որ թոքախտացեալը տանի իր հետ միշտ փոքրիկ սրուակ կամ աման մը , և տնէն դուրս ևս միշտ նոյն ամանին մէջ թքնէ , ոչ երբեք բաց օդոյ կամ փողոցաց մէջ : Նոյն զրուածքին մէջ կը գտնուին գարձեալ հետեւեալ զգուշանթիւնքն .

Բնաւ չննջել թոքախտացելցյ մը անկողնին մէջ . քիչ ատեն կենալ իր խուցի մէջ , և տղայոց բնաւ թոյլ չտալ մերձենալ հիւանդին կամ իր սենեկին :

Թոքախտացելցյն բնակութենէն հեռացնել այն ամէն անձինք որք կ'ենթադրուին պատրաստականք կամ յարմարագոյնք նոյն հիւանդութեան : Մասնաւորապէս պէտք է զգոյշ կենան՝ ծաղիկ , ստէպ ծանր հարբուխ կրող և այլ նման հիւանդութեանց ենթակայ եղաղ անձինք , վասն զի յարմարագոյնք են : —

Թոքախտացելցյն մարմնոյն դպած բան մի չգործածել (սաւանք , ծածկոցք , զգեստք , կօշիկք , կահկարսասիք) նախ քան ծխելու :

Յետ ժողլու իր բնակարասնը պէտք է զայն լաւ մը ծխել :

Նոր և մեծ բորբոքար շոգենաւ : — Ամսաթերթի մը մէջ կարգացնք Ավկիհանոս կտրող մեծամեծ շոգենաւոց երագութիւնը : Սիրի օֆ Փարի կոչուած շոգենաւն՝ Եւրոպայէ ՚ի Միացեալ - Նահանգք երթեեկող շոգենաւոց մէջ՝ ամենէն արագն է . 170 մէդր երկայնութիւն , 19 լայնութիւն և 13 մէդր բարձրութիւն ունի . իր տանողութեան (toupage) չափն է 10,500 տակառաչափ : Այս հրէշը մըղելու համար՝ 20,000 ձիու զօրութեամբ շարժիչ մեքենաներ կան , և այս ահագին զօրութեամբ օժանդակեալ միջին հաշուով ժամուան մէջ մինչև 30 չափ կ'ընթանայ , որ է ըսել 37 մղոն կամ հազարամէդր : Այս երագութիւնն ստանալու համար՝ որով վեց աւուր մէջ ահագին աալանդեան Ավկիհանոսը կը կտրէ օրուան մէջ 300 տակառաչափ ածուխ կը սպառէ : իսկ ամբովզ երթին համար 1,800 տակառաչափ : Իւր երկու մղիչ պտուտակներն (հելice) բոպէի մէջ 88 շըրջան կ'ընեն , վեց օրուան մէջ 760,320 շըրջան :

Մեծ Զողաձուկ (Morue) մը : — Ի Լոֆոտն (Նորվեկիա) հսկայ ձողաձուկ մը որսացեր են . այս ձուկը 13 հազարագրամ կը կըսէ և 1. 62 մէդր երկայն է : Բատ Պ. Քողթի մէդր մի երկայնութիւնն իսկ չափազանց է այս ցեղի ձկանց համար : Զուարանն Յ հազարա-